

---

---

## ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 20-ին կայացավ ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետու ընդհանուր ժողովը: Ժողովը մեկնարկեց նախօրեին՝ ակադեմիայի գիտական բաժանմունքներում, ուր լսվեցին բաժանմունքների գործունեության տարեկան արդյունքները, տեղի ունեցան լուրջ և շահագրգիռ քննարկումներ:

Բաժանմունքներում լսվեցին նաև բազմաթիվ գիտական զեկուցումներ: Նշենք նաև, որ զեկուցումների հեղինակները ոչ միայն ակադեմիայի գիտնականներն էին, այլև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան ամրամասերը:

Տարեկան ընդհանուր ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովիկ Աբրահամյանը, նախարարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, ԳԱԱ արտասահմանյան ամրամասեր, հյուրեր: Հայոց եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը ժողովի մասնակիցներին հաղորդեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Երկրորդի ողջույնը, հայրապետական օրհնությունն ու գնահատանքը:

Բացելով ընդհանուր ժողովը, ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը խնդրեց ժողովի մասնակիցներին մեկ րոպե լռությամբ հարգել վերջին պատերազմում հերոսաբար նահատակված մեր զինվորների հիշատակը: Այնուհետև ժողովականները մեկ րոպե լռությամբ հարգեցին հաշվետու տարում կյանքից հեռացած ԳԱԱ ակադեմիկոսներ Ռոբերտ Աթայանի, Գևորգ Բրուտյանի և Հրաչիկ Միմոնյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Կարեն Պողոսյանի հիշատակը:

Իր ողջույնի խոսքում ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, մասնավորապես նշեց. «ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը պատեհ առիթ է՝ ՀՀ գիտնականների աշխատանքի արդյունքները քննարկելու և ամփոփելու, հետագա անելիքները նախանշելու համար: Ժամանակակից պետության հիմքում ընկած է կրթական, գիտական ու բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացման ապահովումը, այդ իսկ պատճառով գիտության ոլորտը մշտապես գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում: Մենք ունենք հստակ մշակված քաղաքականություն, և այսուհետև ևս, մեր հետևողական ջանքերն ուղղված են լինելու ոլորտի հետագա զարգացմանը, առկա խնդիրների լուծմանը, ինչպես նաև տարեցտարի ֆինանսական հնարավորությունների մեծացմանը:

Արդեն իսկ կնքված միջազգային բազմաթիվ պայմանագրերի շրջանակում կառավարությունը հնարավորինս աջակցում է մեր գիտնականների սերտ համագործակ-

ցությանը համաշխարհային հեղինակավոր գիտական կենտրոնների հետ: Եվրոպական գիտական համայնքին ինտեգրման խորացմանն է ուղղված, մասնավորապես, Եվրոպական միության գիտության և տեխնոլոգիաների «Հորիզոն – 2020» ծրագրին ՀՀ ասոցացված մասնակցության համաձայնագիրը, որը կստորագրվի այս տարվա մայիսին», – ասել է վարչապետը:

Հովիկ Աբրահամյանի խոսքով, գիտական դարավոր ավանդույթներ ունեցող մեր երկրում գիտական նոր գաղափարներն ու մշակումները կարևորագույն ռեսուրսներից են, և մենք պարտավոր ենք անել հնարավորը՝ այն առավելագույնս իրացնելու համար: «Համոզված եմ, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և մեր ողջ գիտական հանրությունը պետք է օր առօր մտածեն ուժերը համախմբելու մասին, ակտիվորեն զբաղվեն գիտության համակարգի աշխատանքն առավել օպտիմալացնելու նպատակով կառուցվածքային բարեփոխումներով՝ ռազմավարական նշանակության խնդիրներ սահմանելով և դրանց լուծելու անհրաժեշտությունը հաշվի առնելով: Մենք պարտավոր ենք գիտության ոլորտը դիտարկել ոչ միայն երկրի հեռանկարային տնտեսական զարգացման ռազմավարության, այլև ազգային անվտանգության տեսանկյունից: Ուզում եմ այս բարձր ամբիոնից հայտարարել, որ կառավարությունն այսուհետև ևս լինելու է ականջալուր ակադեմիայի բոլոր այն ողջամիտ խնդիրներին, որոնք կառաջադրվեն ՀՀ կառավարությանը», – ընդգծել է վարչապետ Աբրահամյանը և բեղմնավոր աշխատանք, նորանոր գիտական գաղափարներ ու նվաճումներ մաղթել ժողովի մասնակիցներին:

Այսուհետև ՀՀ ԳԱԱ 2015 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

ՀՀ ԳԱԱ հարգելի անդամներ, մեծարգո հյուրեր:

Տարեկան ժողովի հարգելի մասնակիցներ, հաշվետու տարին՝ 2015 թվականը, համազգային նշանակության խոշոր իրադարձություններով հագեցած առանձնահատուկ տարի էր: Լրացավ թուրքական իշխանությունների կողմից խաղաղ հայ բնակչության նկատմամբ կիրառված ցեղասպանության 100 տարին: Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի հայությունը համախմբված ու միասնական կամքով դատապարտեց կատարված բարբարոսությունը: Այն նաև միջազգային լայն արձագանք ունեցավ, և աշխարհի շատ պետություններ ու ժողովուրդներ միացան ցեղասպանությունը դատապարտելու, արդարությունը վերականգնելու և եղեռնի հետևանքները վերացնելու հայ ժողովրդի պահանջատիրությանը:

Ավելորդ չեմ համարում նշել, որ տակավին անցյալ դարի 50–60-ական թվականներից գիտությունների ակադեմիայի ուշադրության կենտրոնում է եղել այս հիմնախնդիրը, հրատարակվել ու հասարակությանն են ներկայացվել գիտականորեն հիմնավորված մենագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ և

այլ ուսումնասիրություններ: Նոր հրապարակումներով, գիտական նստաշրջաններով և զանգվածային լրատվության միջոցներով ակադեմիան ակտիվորեն մասնակցել է ցեղասպանությանը նվիրված միջոցառումներին և շարունակում է այդ գործընթացը:

Հանրապետության կյանքում կարևոր իրադարձություն էր նաև կառավարման համակարգը վերակառուցելու, առավել ժողովրդական դարձնելու նախաձեռնությունը: Այդ խնդիրը իրականացնելու համար հիմնական օրենքի՝ Սահմանադրության մեջ համապատասխան վերափոխումներ կատարվեցին: Գիտությունների ազգային ակադեմիան գործում է այդ բարեփոխությունների ոլորտում:

2015 թվականին ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում շարունակվել են հիմնարար և կիրառական բնույթի գիտական մշակումները, պահպանվել է բարձր մակարդակի գիտական արդյունքների ստացման ավանդույթը: Դրա վկայությունն են արտերկրում տպագրած աշխատանքները. արտասահմանյան հեղինակավոր գիտական պարբերականներում հրատարակվել է 776 հոդված, 30 մենագրություն և ժողովածու, ինչպես նաև կատարվել են աշխատանքներ միջազգային ծրագրով:

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Ֆիզիկայի բնագավառում առավել զարգացած ուղղություններից մեկը լազերային ճառագայթման ռեզոնանսային փոխազդեցության ուսումնասիրությունն է մետաղների գոլորշիների հետ: Վերջին տարիներին մշակվել և իրականացվել է օպտիկական վեկտորական մագնիսաչափի հայեցակարգը: Սարքի զգայնությունը 5 միկրոգաուս է: Նրա հիմնական կիրառությունը երկրամագնիսական դաշտի քարտեզագրումն է: Այս ուղղությամբ արժեքավոր ներդրման համար աշխատանքների ղեկավար, ԳԱԱ ՖՀԻ-ի տնօրեն ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը 2015 թ. արժանացել է «ICO Galileo Galilei Award» մրցանակին:

Ռադիոֆիզիկայի, ռադիոլոկացիայի, անտենաների տեսության և ազդանշանների մշակման ոլորտում ՌՖԷԻ-ում կատարվող հիմնարար հետազոտությունների արդյունքում ստեղծվել է դյուրակիր ռադարային համակարգ, որը թույլ է տալիս կարճ հեռավորությունների վրա (2–4 կմ) հայտնաբերել շարժվող օբյեկտները:

Կիսահաղորդչային պլազմայի համար մշակվել է նրա բնութագրերի հսկման, կառավարման և արտապատկերման համակարգ:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ոլորտում հետազոտվել է բազմաչափ բազմարժեք դիսկրետ ցանցում որոշված մոնոտոն բինար ֆունկցիայի ճանաչման ալգորիթմական խնդիրը: Տրվել է այդ ալգորիթմի բարդության գնահատականը:

ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեղծվել է թվային արժեքավորման նոր տեսություն և համապատասխան հաշվողական ծրագիր՝ բարդ քիմիական ռեակցիաների մեխանիզմի հիմքում ընկած առանձին քիմիական փուլերի և բաղադրիչների արժևորությունը բացահայտելու նպատակով: Մա թույլ է տալիս քիմիայի տեսանկյունից հիմնավորված կառավարել քիմիական ռեակցիաները՝ ռեակցիայի նպատակային արգասիքների արդյունավետ ստացման նպատակով:

Տարածաշրջանային երկրադինամիկայի ոլորտում կատարվել է Հայաստանի տարածքի երկրակեղևի բլոկների շարժման վեկտորների և արագությունների որոշում:

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնական գիտությունների բնագավառում 2010–2015 թթ. կատարված գիտական աշխատանքները ելնում են նրանից, որ XXI դարը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գնահատմամբ համարվում է նաև կենսաբանության զարգացման բուռն ժամանակաշրջան: Կենսաբանության և բժշկագիտության զարգացումը ենթադրում է ինչպես մարդկային հասարակության լիարժեք և բազմակողմանի զարգացում (գիտություն կյանքի մասին), այնպես էլ շրջակա միջավայրի, բուսական և կենդանական աշխարհների պահպանություն:

Կատարված հետազոտությունները ըստ էության վերաբերում են բժշկակենսաբանության, էկոլոգիայի բնագավառների այն ոլորտներին, որոնք սերտորեն առնչվում են շրջակա միջավայրի պահպանության տեսական և կիրառական մեծ նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը:

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրատարակվել է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի 3-րդ հատորի 2րդ գիրքը, որն ընդգրկում է Հայոց նոր պատմության վերջին՝ 1901–1918 թթ. բարդ ու փոթորկալից իրադարձությունների ժամանակաշրջանը: Գրքում լուսաբանվել են Հայաստանի XX դարասկզբի սոցիալ-տնտեսական հիմնահարցերը, ազգային և սոցիալական շարժումները: Հատուկ բաժիններով շարադրվել են 1917 թ. ռուսաստանյան հեղափոխությունից հետո Հայաստանում ստեղծված քաղաքական անցքերը:

«Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)» գրքում (ակադեմիկոս Ա. Մելքոնյան) հայեցակարգային մակարդակով ուսումնասիրվել են Հայոց ցեղասպանության և հայրենագրկման, ճանաչման

ու հատուցման հիմնախնդիրները, Թուրքական պետության կողմից ցեղասպանության իրագործմամբ, հայկական համայնքային կալվածքների բռնագրավմամբ և Քեսաբի վրա հարձակում կազմակերպելու հետևանքով հայ ժողովրդին հասցված նյութական վնասների ամփոփ պատկերը:

Հետազոտվել են Դերեդի ավազանում գտնվող Հաղթանակ-3 կայանի ստորին պալեոլիթին վերաբերող մշակութային նստվածքները: Պալեոմագնիսական անալիզի շնորհիվ պարզվել է, որ դրանք 1,77 միլիոն տարվա վաղեմության շերտեր են: Այս տվյալները հնարավորություն են տալիս Հայաստանի Հանրապետության տարածքի բնակեցման սկզբնափուլերն արտահայտող ստորին պալեոլիթի սկիզբը հասակագրելու 1,77 մլն. տարի վաղեմությամբ:

«Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայ գրատպության և գրքարվեստի հանրագիտարանը», որը ներկայացնում է հայ գրքի (ձեռագիր և տպագիր) ստեղծման պատմությունը՝ իր բոլոր բաղադրիչներով, հայոց գրերի գյուտից մինչև մեր օրերը:

«Հայ իրականության պատմափիլիսոփայական, սոցիալքաղաքական և իրավագիտական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում (ղեկավար՝ ակադեմիկոս Գ. Պողոսյան) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ հանգամանորեն վերլուծվել են ցեղասպանության հետևանքով արևմտահայության ժողովրդագրական ու տարածքային կորուստները, դրանց հեռահար պատմական, իրավաքաղաքական, սոցիոլոգիական, սոցիալ-փիլիսոփայական հետևանքները:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ  
ՈՐՈՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Այս աշխատանքների կատարման ընթացքում հաստատվել է գործարար համագործակցություն պաշտպանության նախարարության և այլ գերատեսչությունների հետ: Ստեղծվել է բարձր հաճախային պլազմայի բնութագծերի կառավարման և արտապատկերման համակարգ: Այս աշխատանքները կատարվում են Հարավային Կորեայում գտնվող «Samsung» ընկերության մասնաճյուղի հետ կնքված պայմանագրի շրջանակներում:

ՌՖԷԻ-ում կատարվում են աշխատանքներ՝ նվիրված CIGS, CZTS և CdTe բազմաբյուրեղային բարակ թաղանթային, արեզակնային ֆոտովոլտային տարրերին՝ նստեցված այլընտրաքային պեռլիտային ապակե բյուրեղական տակդիրների վրա, որոնք հնարավորություն են տալիս արեզակնային փոխակերպիչը ինտեգրելու շինարարական տարրեր կոնստրուկցիաների, մասնավորապես տանիքի կղմինդրի վրա: Աշխատանքներ են տարվում նման արեզակնային տարրերի օպտիմալ կառուցվածքների մշակման, միջև 30 սմ<sup>2</sup> մակերեսով մինի-մոդուլների և «արեզակնային կղմինդրների» ստեղծման ուղղությամբ:

Մշակված հատուկ քիմիական ռեակտորում պրոպանի (բնական գազի բաղադրիչ) օքսիդային կրեկինգի քայքայման ոչ կատալիտիկ գազաքիմիական պրոցեսի ընթացքում հաջողվել է արժեքավոր արգասիքների՝ կարևոր պոլիմերների հանդիսացող էլանյութ պրոպիլենի էլքը հասցնել մինչև 90%-ի, ինչը լավագույն ցուցանիշն է այդ բնագավառում (Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ):

Ստացվել են ամինաթթուների նոր ածանցյալներ, որոնք ցուցաբերում են հակախոլինէսթերազային հատկություններ և որոնց հետագա մանրակրկիտ ուսումնասիրությունները կարող են Ալցհեյմերի հիվանդության բուժման դեղամիջոցի ստեղծման հիմք հանդիսանալ (ՕՂԲ ԳՏԿ կենտրոն):

Մինթեզվել են հատուկ բաղադրության և կառուցվածքի կերամիկական ջերմակայուն նյութեր, որոնք առանձնանում են ցածր ջերմային ընդարձակման գործակցով և բարձր տեսակարար էլեկտրական դիմադրությամբ: Այս նյութերը կիրառվում են էլեկտրոնիկայում և կիսահաղորդչային տեխնիկայում որպես տակդիրներ (անօրգանական քիմիայի ինստիտուտ):

Նախագծվել և պատրաստվել է տարաբնույթ շարժումները ընկալող եզակի հնարավորություններով նոր սեյսմաչափ, որը նախատեսված է կառույցների սեյսմակայունության որոշման համար (Նազարովի անվան երկրաֆիզիկայի ինստիտուտ):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Շարունակվում են արտադրվել և ելրոպական շուկայում իրացվել ավելի քան 15 օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուներ («Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն):

Արտադրվում է «Նարինե» կաթնաթթվային մթերքը կաթնաթթվային բակտերիայի հիման վրա: Արտադրանքն այսօր սպառվում է «Էսկուլապ», «ՆատալիՖարմ» և «ԱլֆաՖարմ» ընկերությունների դեղատնային ցանցերում, մի շարք ծննդատներում և մանկապարտեզներում («Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն):

Միզի արդյունագործական պաշարների վերականգնման նպատակով, ինստիտուտի ներկայացրած առաջարկների հիման վրա, ՀՀ բնապահպանության նախարարի հրամանի համաձայն՝ ուժեղացվել է որսի վերահսկողությունը Սևանա լճում (կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն):

Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և անհետացող որոշ տեսակների էկոֆիզիոլոգիական հետազոտությունների արդյունքում գնահատվել են տարբեր բնակլիմայական պայմաններում դրանց հարմարողականության հնարավորությունները:

Երևանում, ինչպես նաև լեռնահանքային շրջանների հողերում և բույսերում գրանցվել են մի շարք ծանր մետաղների պարունակության մի քանի անգամ գերազանցող տվյալներ, որոնք ներկայացվել են Բնապահպանության և Գյուղատնտեսության նախարարություններին:

Մեղրախոտի դեղահումքից պատրաստված «Մեղրախոտ հայկական» ապրանքատեսակը (մոտ 200 հատ) վաճառքի համար տրվել է «Գեդեոն Ռիխտեր» ֆիրմայի դեղատներին (հիդրոպոնիկայի ինստիտուտ):

Հաստատվել է գալարմինի ազդեցությունը մի շարք վտանգավոր ինֆեկցիաների բուժման և կանխարգելման վրա: Ստացվել են նաև կարևոր կլինիկական տվյալներ Ալցհեյմերի, սիրտ-անոթային հիվանդությունների ժամանակ գալարմինի բուժական ազդեցության վերաբերյալ (կենսաքիմիայի ինստիտուտ):

Վերականգնողական բժշկական կարիքների համար մշակվել և փորձարկվել են նոր կենսահամատեղելի համաձուլվածքներ, որոնց մակերեսը պատված է ոսկրային հյուսվածքի մեջ լիարժեք ներմուծումն ապահովող կենսակտիվ նյութերով:

Մշակվել է գյուրգայի խայթոցի դեմ դեղամիջոց, որի գլխավոր բաղադրիչը կենդանիների մկանային հյուսվածքում հայտնաբերված տաուրինն է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ԳԱԱ միջազգային համագործակցությունը նպատակաուղղված է եղել ապահովելու համակարգի աշխատողների առավել ակտիվ մասնակցությունը միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերին, ուժեղացնելու համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և արտերկրի գիտական կառույցների հետ՝ անդամակցելով տարբեր միջազգային կառույցների, կազմակերպելով և մասնակցելով միջազգային միջոցառումների՝ ելնելով գիտության զարգացման ԳԱԱ-ի ռազմավարությունից:

ԳԱԱ-ի միջազգային համագործակցությունն իրականացվել է՝

- միջպետական և միջկադեմիական համաձայնագրերով,
- գիտական կենտրոնների և ինստիտուտների միջև կնքված երկկողմ պայմանագրերով,
- միջազգային դրամաշնորհային ծրագրերին (ԾճՁձ, FP7, ANSEF, H-2020) մասնակցությամբ,
- ԳԱԱ-ի արտասահմանյան անդամների միջոցով գիտական համագործակցությամբ:

Գիտությունների ազգային ակադեմիայում 2015 թ. հոկտեմբերին տեղի է ունեցել ԱՊՀ երկրների գիտական կառույցների ներկայացուցիչների խորհրդի 4-րդ նիստը՝ հիմնարար գիտությունների բնագավառում ծավալված համագործակցության վերաբերյալ: ԳԱԱ-ի գործունեության և միջազգային համագործակցության վերաբերյալ զեկուցումով հանդես է եկել ԳԱԱ նախագահը՝ ներկայացնելով հայ գիտության դերը հիմնարար գիտությունների զարգացման ոլորտում: Նիստում քննարկվել են համագործակցության ծրագրերը և ուղղությունները:

Հոկտեմբերին տեղի է ունեցել հայ-գերմանական գիտության օրերին նվիրված միջոցառումների շարք, որոնց ընթացքում քննարկվել են հայ-գերմանական գիտական և կրթական համագործակցության առկա հարցերը, իրականացված աշխատանքների արդյունքները, մատնանշվել են կարևորագույն ուղղությունները՝ համագործակցության հետագա զարգացման նպատակով: Միջոցառմանը ելույթ է ունեցել ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը՝ «Գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների ամրապնդման միջոցով ՀՀ տնտեսության զարգացումը» թեմայով: Քննարկումների ավարտին կնքվել է հուշագիր Կարլսրուեի տեխնոլոգիաների ինստիտուտի և գիտությունների ակադեմիայի միջև՝ երկրաբանության ասպարեզում համատեղ աշխատանքներ կատարելու վերաբերյալ:

Միջազգային համագործակցության կարևոր ուղղություններից է արտասահմանյան գիտական կենտրոնների կառույցների ստեղծումը հանրապետության տարածքում: 2015 թվին ավարտվել է ԳԱԱ-ի կազմում հիմնադրված միջազգային Իկրանեստ ցանցի կենտրոնի ստեղծման իրավական փաստաթղթերի ձևակերպումը: Կենտրոնի գործունեության հիմնական նպատակը ռեյատիվիստական աստղաֆիզիկայի, ռենտգենյան աստղաֆիզիկայի, բարձր և գերբարձր էներգիաների բնագավառներում տեսական և դիտողական հետազոտությունների իրականացումն է:

Միջազգային աստղագիտական միությունը (IAU), հաշվի առնելով հայ աստղագետների մեծ դերը աստղագիտության զարգացման ոլորտում, 2015 թ. Բյուրականի աստղադիտարանում բացել է միության Հարավ-արևմտյան Ասիայի աստղագիտության զարգացման տարածաշրջանային գրասենյակ:

Գիտությունների ակադեմիայի և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) միջև կնքված համագործակցության պայմանագրերի հիման վրա ստեղծվել են հետազոտական լաբորատորիաներ:

ԳԱԱ հնագիտության և ազգագարության ինստիտուտի, CNRS-ի Լիոնի, Ռենի և Մոնպելեյի համալսարանների միջև ստեղծված լաբորատորիան 2009–2014 թթ. հետազոտություններ է իրականացրել «Մարդ-շրջակա միջավայր փոխհարաբերությունը լեռնային գոտում՝ Հայաստան» թեմայի շրջանակներում:

ԳԱԱ-ի մի շարք ինստիտուտներ անդամակցում են տարբեր միջազգային մասնագիտական ընկերություններին և միություններին:

Միջազգային համագործակցություններից կարելի է տարբերակել միջակադեմիական, միջպետական և միջգերատեսչական ու միջինաստիտուտային համագործակցությունները: Միջակադեմիական համագործակցություններից կարելի է առանձնացնել Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Մոլդովայի, Չինաստանի, Լիտվայի, Ռումինիայի, Ուկրաինայի, Բելառուսի ակադեմիաների հետ համագործակցության պայմանագրերը:



Միջպետական և միջգերատեսչական համագործակցություններից են տնտեսական միջկառավարական հանձնաժողովի կողմից իրականացվող հայ-ռուսական, հայ-բելառուսական, հայ-լիտվական, հայ-լատվիական, հայ-թուրքմենական և այլ համագործակցությունները: Հայ-ռուսական համագործակցությունից հիշատակության են արժանի ԳԱԱ-ի և ՌԴ «Միավորված ավիաշինական կորպորացիա-յի միջն գիտատեխնիկական և ինովացիոն համագործակցության պայմանագիրը, Բյուրականի աստղադիտարանի, ՌԳԱ հատուկ աստղաֆիզիկական աստղադիտարանի, ՌԳԱ Կելդիշի անվան կիրառական մաթեմատիկայի ինստիտուտի և այլ կառույցների կողմից նոր օպտիկական սարքավորման տեղադրումը Բյուրականում, արտասարեզակնային մոլորակների որոնման հետազոտությունը, Բյուրականի աստղադիտարանի եզակի գործիքների արդիականացումը, տեխնիկական միջոցների վերազինումը, ռուսական նոր օպտիկական սարքերի տեղադրումը, մերձերկրյա տարածքի մոնիթորինգային աշխատանքների իրականացումը (տիեզերական աղբ և մարմիններ):

2015 թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը ԳԱԱ-ում Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտն անց է կացրել «Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ – CSIT2015» միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են Ֆրանսիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Լեհաստանի, Հնդկաստանի, Իրանի, Ուկրաինայի և այլ երկրների գիտնականներ: Գիտաժողովի լավագույն զեկուցումները տպագրվել են IEEE ժողովածուում:

«Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ» IV միջազգային գիտաժողովն անց է կացվել 2015 թ. սեպտեմբերին:

«Հոծ միջավայրի մեխանիկայի արդի խնդիրներ» IV միջազգային գիտաժողովը կազմակերպվել է տարբեր կառույցների համագործակցությունների արդյունքում:

«21-րդ դարի մետաքսի ճանապարհ. հեռանկարներ և համագործակցություն» միջազգային ֆորումն իրականացվել է ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Վ. Բրյուսովի անվան ինստիտուտի հետ համատեղ:

ԳԱԱ միջազգային համագործակցության ծրագրերում ակտիվ մասնակցություն են ունեցել երիտասարդ գիտնականները: Ելնելով ԳԱԱ ռազմավարությունից՝ ապահովվել է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտական տարբեր ուղղություններում իրականացվող միջազգային հանդիպումներին և գիտական միջոցառումներին:

Ներկայումս ԳԱԱ-ն մասնակցում և իրականացնում է տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը, միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) ծրագիրը, Եվրոպական Յոթերորդ շրջանակային ծրագիրը (FP7), ՏԵՄՊՈՒՄ Համաեվրոպական շարունակական ծրագիրը համալսարանական կրթության համար, Սնծովյան

տնտեսական համագործակցություն (BSEC) և այլ ծրագրեր: ԳԱԱ կառույցները ակտիվորեն մասնակցում են ԱՄՆ-ի տարբեր ծրագրերի՝ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների (CRDF Global), Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF), Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի (NFSAT) և այլն:

#### ԳԻՏԱԿԱՆ ԿԱՂԵՐ

2016 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ կազմում ընդգրկված են 60 ակադեմիկոս և 59 թղթակից անդամ: Հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ-ի աշխատողների ընդհանուր թիվը 4086 է, որոնցից 2451-ը գիտական աշխատողներ են, 344-ը՝ գիտության դոկտորներ, 1116-ը գիտության թեկնածուներ, 991-ը գիտական աշխատողներ առանց գիտական աստիճանի:

Հաշվետու տարում ԳԱԱ համակարգում աշխատանքի է ընդունվել 166 երիտասարդ մասնագետ, որոնցից 40-ը ընթացիկ տարվա շրջանավարտներ են: Համակարգի աշխատակիցներից 12-ը պաշտպանել են դոկտորական, 51-ը՝ թեկնածուական ատենախոսություններ:

ԳԱԱ համակարգի և այլ կազմակերպությունների համար երիտասարդ կադրեր է պատրաստում ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը, որն իրականացնում է կրթական ծրագրեր մագիստրոսական և ասպիրանտական մակարդակով: Ի տարբերություն բուհերում իրականացվող նույնատիպ ծրագրերի, կենտրոնում դրանք իրականացվում են գիտական կառույցներում, որը մեծ առավելություն է բուհական ոչ հարուստ գիտական լաբորատորիաների հանդեպ: Կենտրոնի կողմից մշակված և շրջանառության մեջ դրված ուսումնական ծրագրերը հավանության են արժանացել հանրության կողմից: Մասնագիտական առարկաների ուսուցումն իրականացվում է հետազոտական կառույցներում: Այս առավելության պատճառով շատ բուհերի բակալավրիատի շրջանավարտներ գերադասում են ուսումը շարունակել ԳԱԱ-ի գիտակրթական կենտրոնում: Կենտրոնը մասնակցում է միջազգային գիտակրթական դրամաշնորհներին, որպես լավագույն օրինակ կարելի է նշել հեռավար ուսուցման ծրագիրը, որին մասնակցել է 750 ցանկացող:

Գիտական կադրերի պատրաստման և գիտական հետազոտությունների ակտիվացման գործում կարևորվում է ԳԱԱ և գիտական այլ կազմակերպությունների, բուհերի հետ համատեղ գիտակրթական և հետազոտական լաբորատորիաների ստեղծումը: ԳԱԱ-ի մի քանի ինստիտուտներ նմանատիպ կառույցներ ստեղծել են ԵՊՀ, Մլավոնական, մանկավարժական, ճարտարագիտական համալսարանների հետ:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Անդրադառնալով գիտահետազոտական հետազոտությունների ֆինանսավորման խնդիրներին, զեկուցողը մասնավորապես նշեց, որ արտաբյուջետային միջոցները զգալի կավելանան, եթե առաջիկա տարիներին մի շարք ինստիտուտների ինֆրակառուցվածքը համալրվի նորագույն տեխնիկական միջոցներով և նյութերով: Մրա մասին շատ է խոսվել վերջին տարիներին: Այս ուղղությամբ տեղաշարժեր չլինելու դեպքում առաջիկա տարիներին կկորցնենք նաև առաջատարի մեր դիրքը հիմնարար ուսումնասիրությունների ոլորտում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2015 թվականին համակարգի աշխատողների սոցիալական ոլորտի հարցերը եղել են ԳԱԱ նախագահության ուշադրության կենտրոնում: Հաշվետու տարում, երկարատև պայքարից հետո, վերջապես լուծվեց գիտաշխատողների երկարացված արձակուրդի հարցը: 2015 թ. հունվարի 1-ից բոլոր գիտաշխատողները կօգտվեն երկարացված արձակուրդից: Նույն ժամանակաշրջանում կրկնապատկվեց համակարգի գիտական աստիճան ունեցող աշխատողների հավելավճարը: Հարգարժան Սերժ Մարգարյանի նախաձեռնությամբ ակադեմիայի անդամները գիտական աստիճանի համար ստանում են հավելավճար անցյալ տարվանից: Գիտությունների դոկտորն այժմ ամսական ստանում է հավելյալ 50.000 դրամ, իսկ գիտությունների թեկնածուն՝ 25.000 դրամ:

Համակարգի աշխատողների միջին աշխատավարձը բյուջեից 117 հազար դրամ է՝ նախորդ տարվա 100 հազար դրամի փոխարեն: Եթե արտաբյուջետային միջոցների 50%-ը հատկացվում է աշխատավարձին, ապա ընդհանուր միջին աշխատավարձը կազմում է մոտ 150 հազար դրամ: Հումանիտար ուղղվածության մեծ թվով ինստիտուտների աշխատակիցների աշխատավարձը զգալիորեն ցածր է ընդհանուր միջինից, որովհետև այդ կազմակերպությունները համարյա չունեն դրամաշնորհներ և պայմանագրային աշխատանքներ:

Համակարգի աշխատողների համար սոցիալական մեծ աջակցություն է «սոցիալական փաթեթի» տրամադրումը, որն իրականացվել է նախագահ Սերժ Մարգարյանի աջակցությամբ: Ինստիտուտների շատ աշխատողներ ի վիճակի եղան օգտվելու բժշկական բարդ ծառայություններից, որոնք նրանց համար անհնարին էին առանց «սոցիալական փաթեթի»: Վերջին շրջանում մի շարք ինստիտուտների տնօրեններ դիմում են Նախագահություն՝ ստանալու լրացուցիչ «սոցփաթեթի» իրավունք: Ներքին առողիտի ղեկավար պարոն Դանիելյանը և ֆինանսական բաժնի վարիչ պարոն Փանոսյանը պետք է պարզեն, թե այս տարվա ընթացքում ինչով է պայմանավորված

այդ պահանջարկը, երբ աշխատանքի ընդունված աշխատողների թիվը համեմատաբար փոքր է նշված պահանջարկից:

Մոցիալական բնույթի բազմակողմանի գործունեություն է ծավալել ակադեմիայի «Գիտության զարգացման հիմնադրամը», որի ֆոնդից ինստիտուտների 19 աշխատակից ստացել են 3.400 000 ( երեք միլիոն չորս հարյուր հազար) դրամի նյութական օգնություն:

Մոցիալական դժվար լուծելի խնդիրներից է բնակարանային պրոբլեմը, որն ավելի խոցելի է հատկապես երիտասարդների դեպքում: 2015 թ. շահագործման է հանձնվել հիպոթեքային հիմունքներով կառուցված 200 բնակարանանոց շենքը: Ավարտվել են նոր՝ 164 բնակարան ունեցող շենքի նախագծային աշխատանքները, ընթանում են բնակարանների նախնական բաշխման աշխատանքները և ապրիլին կսկսվեն շինարարական աշխատանքները: Շենքը պատրաստ կլինի 2018 թվականի աշնանը:

2015 թվականի ԳԱԱ գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցեց ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը: Զեկուցման վերջում Հրանտ Մաթևոսյանը անդրադարձավ ՀՀ ԳԱԱ-ի կողմից անցկացվող երկու մրցանակաբաշխություններին:

Առաջին. «ՀՀ ԳԱԱ գիտության զարգացման հիմնադրամը» նպատակ ունենալով՝ մի կողմից խթանել ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջև համագործակցությունը, մյուս կողմից՝ ի մի բերել արդեն ստացված արդյունքները, հայտարարել է «Լավագույն միջոցի սցիպլինար գիտական աշխատանք 2016» մրցույթը, որին կարող են ներկայացվել վերջին հինգ տարիներին համատեղ իրականացված միջոցի սցիպլինար գիտական աշխատանքները:

Երկրորդ. ՀՀ ԳԱԱ-ն, Համաշխարհային հայկական կոնգրեսը և Ռուսաստանի հայերի միությունը ՀՀ սփյուռքի նախարարության հետ հայտարարել են 2016 թ. լավագույն գիտական աշխատանքների մրցույթ «Համագային միասնականությունը որպես մեր ուժի, հզորության գրավական» թեմայով՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին:

Զեկուցումներից հետո տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ 2015 թվականի գիտական գործունեության արդյունքների շահագրգիռ քննարկում:

Ելույթ ունեցան ՀՀ ԳԿՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժան Հակոբյանը, Գյումրու երկրաֆիզիկայի և սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ Աննա Ասատրյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ստեփան Պետրոսյանը:

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը հայտարարություն ընդունեց Արցախի դեմ Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կապակցությամբ: Այն ժողովականներին ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը:

#### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը խստորեն դատապարտում է Ադրբեջանի Հանրապետության կողմից սույն թվականի ապրիլի 2-ի լույս գիշերը արցախա-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով իրականացված լայնածավալ ռազմական գործողությունը, որի հետևանքով զոհվեցին զինվորականներ և խաղաղ բնակիչներ: Այդ ընթացքում հրետակոծությունից անմասն չմնացին նաև ՀՀ սահմանամերձ բնակավայրերը: Ռազմական ագրեսիայի միջոցով Ադրբեջանը ձգտում էր վերազավթել բոլշևիկյան կուսակցության Կովկասի բյուրոյի ապօրինի որոշմամբ 70 տարի Ադրբեջանի կազմում օկուպացված և 1991 թ. իր անկախությունը հռչակած Արցախը և ավարտին հասցնել արցախահայության նկատմամբ իր կողմից տասնամյակներ շարունակ իրականացվող ցեղասպանական քաղաքականությունը:

Ադրբեջանի այս սադրանքն իրականացվել է Թուրքիայի անմիջական ուղղորդմամբ և աջակցությամբ, ինչի մասին վկայում են այդ երկրի դեկավարների մի շարք հայտարարություններ: Այսպիսով մեկ անգամ ևս հաստատվեց թուրք-ադրբեջանական հակահայկական գործակցությունը, որն ուղղված է նաև ողջ քաղաքակիրթ հանրության դեմ:

Հայաստանի գիտնականներն ակնկալում են խնդրի նկատմամբ միջազգային հանրության անաչառ ու հասցեական վերաբերմունքը: Մինսկի խմբի անդամ համանախագահողները պետք է հանդես գան այս ագրեսիան սանձազերծող կողմի՝ Ադրբեջանի գործելակերպի դատապարտմամբ:

Տարակուսելի է, որ տեղի ունեցածի նկատմամբ համարժեք արձագանք չեղավ Հայաստանի դաշնակից ՀԱՊԿ անդամ երկրների կողմից:

Նման պայմաններում լիովին հասունացել է ՀՀ կողմից ԼՂՀ ճանաչման ու նրա հետ ռազմական դաշինքի կնքման անհրաժեշտությունը:

Դիմում ենք միջազգային գիտական հանրությանը՝ ակնկալելով նրա աջակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչման գործում:

Պահանջում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությունը բանակցային գործընթացում ԼՂՀ-ն լիիրավ կողմ ճանաչելու հարցում:

Հույս ենք հայտնում, որ միջազգային և համաշխարհային գիտական հանրությունը համարժեք գնահատական կտա ագրեսոր Ադրբեջանի կողմից հայ խաղաղ բնակչության և զինվորականության նկատմամբ իրականացված աննախադեպ ու անարդկային վայրագություններին:

*Գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովն իր հիացմունքն ու գորակցությունն է հայտնում հայոց բանակի զինվորին, հպարտանում նրա անօրինակ հերոսությամբ, տոկունությամբ, նվիրումով և հավաստում, որ շարունակելու է իր նպաստը բերել զինված ուժերի գիտատեխնիկական մակարդակի բարձրացմանը և երկրի պաշտպանունակության ամրապնդմանը:*

«Գիտություն», № 4, ապրիլ, 2016